

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏՍՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«25». 01. 2021 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), ի դեմս նախագահ Ռ. Մարտիրոսյանի, որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսոֆերային հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն՝ Լիլիթ Սահակյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված 99 188 100 (ինսունինը միլիոն հարյուր ութսունութ հազար հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները*, *դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

**2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

**2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝**

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

## **2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

## **2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝**

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

## **2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝**

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարիության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության

կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

### **3 Ծրագրի ֆինանսավորման չափը**

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է **99 188 100 (ինսունիներ միլիոն հարյուր ութսունութ հազար հարյուր) ՀՀ դրամ:**

*(թվերով և բառերով)*

### **4 Մոնիթորինգ**

**4.1** ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

**4.2** Մոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

### **5 Վճարման կարգը և ժամկետները**

**5.1** ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

**5.2** ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

## **6 Կողմերի պատասխանատվությունը**

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

## **7 Պայմանագրի գործողության ժամկետը**

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## **8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **9 Եզրափակիչ դրույթներ**

**9.1** Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա  
(կազմակերպության անվանումը)

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24  
(կազմակերպության հասցեն)

ՀՀ Ֆինանսների նախարարություն,  
հ/հ 900011024115, ՀՎՀՀ 0005673  
(կազմակերպության բանկային վավերապայմանը)

Նախագահ՝ Գ. Մարտիրոսյան  
(ստորագրություն) (անուն, ազգանուն)



ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային  
հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ  
(կազմակերպության անվանումը)

ք. Երևան Արշակունյաց 68  
(կազմակերպության հասցեն)

Երևանի թիվ 1 տեղ. գանձ բաժանմունք  
Հ/հ 900018005414, ՀՎՀՀ 01506627  
(կազմակերպության բանկային վավերապայմանը)

Տնօրեն՝ Լ. Սահակյան  
(ստորագրություն) (անուն, ազգանուն)



Ծրագրի գիտական ղեկավար՝ Լ. Սահակյան  
(ստորագրություն)

(Լ. Սահակյան)  
(անուն ազգանուն)

Հավելված N 1  
N 25 01 2021 թ.  
2-18 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Լիլիթ Սահակյանը վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «25» 01 2021 թ. N 2-18 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 99 188 100 (ինստունինը միլիոն հարյուր ութսունութ հազար հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ  
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան  
(ստորագրություն)  
ՌԱՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ  
(անուն, ազգանուն)  


Կազմակերպություն  
Տնօրեն՝ Լիլիթ Սահակյան  
(ստորագրություն)  
Լիլիթ Սահակյան  
(անուն, ազգանուն)  




**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ**

**« Երջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ »** ծրագրի  
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Նպատակն է ՀՀ տարբեր տարածքների էկոլոգիական իրավիճակի համալիր գնահատումը, էկոլոգիական, առողջական և սննման շղթայի ռիսկի գործոնների բացահայտումը և գնահատումը, էկոլոգիական փորձաքննության գիտամեթոդական հիմունքների մշակումը՝ կիրառելով նորագույն ինովացիոն տեխնոլոգիաներ և միջազգային ընդունված մեթոդներ:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Հետազոտություններն ընդգրկում են դաշտային աշխատանքներ, նմուշների մշակում, տարրալուծում, ստացված տվյալների վիճակագրական և մասնագիտական վերլուծություն: Հետազոտությունների ընթացքում կկիրառվեն զանազան նորարական հմտություններ, դաշտային էքսպրես անալիզի սարքավորումներ, տարածակողմնորոշող թվային տեխնիկա և քարտեզներ, տիեզերական լուսանկարներ, էքսպերտային դասի գերձգրիտ տարրալուծման սարքեր, ԱՏՀ տեխնոլոգիաներ և համակարգչային մոդելավորում: Առանձնակի ուշադրություն է դարձվում աշխատանքի որակի ապահով և որակի վերահսման սկզբունքներին:

Հետազոտությունների գիտամեթոդական հենքն է հանդիսանում գեոէկոլոգիական սկզբունքը, երբ բոլոր տվյալները տարածաժամանակային կապ են ստանում: Օգտագործելով տարածքը որպես օբյեկտիվիզացնող գործոն հնարավոր է դառնում համադրել տարբեր, առաջին հայացքից իրար հետ առնչություն չունեցող տվյալները, օրինակ՝ թույլ երկրաշարժերը ու քաղցկեղի զարգացումը, ծանր մետաղներով հողերի աղտոտվածությունը և պերինատալ մահացությունը և այլն: Շնորհիվ նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը՝ հնարավոր է դառնում իրականացնել խորը, մանրակրկիտ ուսումնասիրություններ՝ ի հայտ բերելով մինչ օրս անհայտ երևույթներ և ռիսկի գործոններ, ինչի շնորհիվ կարելի է մշակել կանխարգելիչ և վնասը նվազեցնող միջոցառումներ:

Հետազոտություններն իրականացվելու են Էկոկենտրոնի հմուտ և բարձրորակ անձնակազմով: Գիտական և ինժեներատեխնիկական անձնակազմի անդամներից 3-ը գիտ. դոկտոր են և 20-ը՝ գիտ. թեկնածու, կեսից ավելին մինչև 35 տարեկան երիտասարդ գիտնականներ, այդ թվում ասպիրանտներ և մագիստրներ: Գիտական անձնակազմի մի մասը հատուկ մասնագիտական վերապատրաստում է անցել ՌԴ-ի, Գերմանիայի, Իտալիայի, Իսպանիայի Մեծ Բրիտանիայի, Լեհաստանի առաջատար գիտական կենտրոններում և տարբեր միջազգային դասընթացներում:

Նշված հետազոտությունների իրականացման համար գերկարևոր է տարբեր դիսցիպլինաներից մասնագետների համախմբված աշխատանքը, մասնավորապես կենսաբաններ, երկրաբաններ, քիմիկներ, աշխարհագետներ, գյուղատնտեսներ, սննդագետներ, սոցիոլոգներ, մաթեմատիկոսներ և ՏՏ ոլորտի մասնագետներ, որոնց միաբանությունը հետազոտությունների հաջողության հիմնական գրավականն է: Գիտական արդյունքները հիմնականում հրատարակվում են գիտաժողովների նյութերում, տարբեր



ժողովածուներում, գրքերում, միջազգային պարբերականներում, այդ թվում ազդեցության գործակից ունեցող ամսագրերում ([www.cens.am](http://www.cens.am)):

Շնորհիվ իրականացված բազմաթիվ դրամաշնորհների և պայմանագրային աշխատանքների՝ էկոլենտրոնն ապահովված է դաշտային աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ամենազնաց ավտոմեքենաներով, տեղափոխելի ժամանակակից անալիտիկ սարքերով, դաշտային պարագաներով, անօդաչու թռչող սարքով (դրոն): Կենտրոնի կազմում գործում է Անալիտիկ փորձարարական լաբորատորիան՝ համալրված թանկարժեք էքսպերտային դասի տարրալուծման սարքերով:

Կենտրոնում գործում են «Բնապահպանություն և բնօգտագործում» մագիստրոսական և ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոնները, որոնցում պատրաստվում են անհրաժեշտ որակավորման երիտասարդ մասնագետները: Առկա է նաև հայցորդների և ասպիրանտների ուսուցման հնարավորությունը, որն ապահովում է ակտիվ գիտնականների որակավորումը:

#### 4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

2021թ.-ին ծրագրով նախատեսված է շարունակել երկրաբնապահպանական և էկոլոգիական անվտանգության հիմնահարցերին ուղղված միջոցառումները՝ հիմնարար հետազոտությունները, որոնք բերված են ստորև՝ ըստ առանձին ուղղությունների և ստորաբաժանումների.

Շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժին. նախատեսվում է հողերում քիմիական տարրերի ֆոնային երկրաքիմիական ասոցացիաների ուսումնասիրություններ և ջրային համակարգի վրա քաղաքային միջավայրի ազդեցության գնահատման նպատակով Հրազդան գետի Երևան քաղաքում ընկած հատվածի մոնիթորինգ ի իրականացում:

Ռադիոէկոլոգիայի բաժին. նախատեսվում են համալիր հետազոտություններ ՀՀ Արմավիրի մարզի գյուղատնտեսական նշանակության տարածքներում՝ հողերում բնական և արհեստական ռադիոակտիվների ակտիվության բաշխվածության բացահայտման, ՀԱԷԿ-ի պոտենցիալ ազդեցություն գնահատման, բնակչության դոզաի և մարդու առողջական ռիսկի գնահատման համար: Ինչպես նաև իրականացվելու է ք. Երևանի բնակչության կողմից սպառվող սննդամթերքում ռադիոակտիվների ակտիվության ուսումնասիրում:

Կենսաէներգիայի և կերային ռեսուրսների բաժին. ուսումնասիրել Արագած լեռան արևելյան լանջում տեղադրված թույլ արածեցված արտոնների արդյունավետությունը, դրանում առանձին բուսախմբերի մասնաբաժինը, տերև/ցողուն հարաբերությունը և հողերում N, P-ի քանակությունը

ԱՏՀ և հեռազննման բաժին. նախատեսվում է շարունակել լանդշաֆտային կայունության գնահատման գիտամեթոդական հիմունքների մշակմանն ուղղված աշխատանքները. կլիմայի փոփոխության պայմաններում լանդշաֆտներում հողօգտագործման (land cover/land use) տարածաժամանակային փոփոխության քարտեզագրման, ինչպես նաև առանձին հողատեսքերի էկոլոգիական վիճակի գնահատման հեռազննման մեթոդի կատարելագործում՝ նեյրոնային ցանցերի վրա հիմնված մեքենայական ուսուցման (Machine Learning: ML) ալգորիթմների կիրառմամբ: Նախատեսվում է նաև շարունակել լանդշաֆտային բաղադրիչների (հող, ջուր, բույս) էկոլոգիական վիճակի գնահատման հեռազննման մեթոդների կատարելագործման աշխատանքները՝ նեյրոնային ցանցերի վրա հիմնված մեքենայական ուսուցման (Machine Learning: ML) ալգորիթմների կիրառմամբ:

Սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվավերլուծական կենտրոն. պլանավորվում է իրականացնել սպանդանոցներում մթերքի անվտանգության կառավարման համակարգերի ներդրմանն ուղղված գիտամեթոդական բնույթի հետազոտությունները, որի նպատակն է կենդանական ծագում ունեցող մթերքի

անվտանգության ոլորտում ռիսկի վրա հիմնված համակարգերի ներդրման գիտամեթոդական հենքի ապահովումը: Առաջին և երկրորդ եռամսյակներում կմշակվի սպանդանոցային ծագում ունեցող մթերքի անվտանգության ապահովման վերաբերյալ մեթոդական ուղեցույց:

UNESCO-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոն. ամբիոնն իր գործունեությամբ կշարունակի աջակցել “Կրթություն հանուն կայուն զարգացման” գործընթացին և նպաստել գիտության ոլորտի 3 (կրթական, հետազոտական և ինովացիոն) բաղադրիչների ինտեգրմանն ազգային և տարածաշրջանային մակարդակներով: Ամբիոնն հնարավորության սահմաններում կհամագործակցի Էկոկենտրոնի կազմում գործող “Բնապահպանություն և բնօգտագործում” մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստմանը՝ ապահովելով համապատասխան տեղեկատվություն և ինտերակտիվ մեթոդներ:

2021թ.-ին ծրագրով նախատեսված կիրառական աշխատանքները բերված են ստորև՝ ըստ առանձին ուղղությունների և ստորաբաժանումների:

Շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժին. կիրականացվեն հողերում քիմիական տարրերի ֆոնային երկրաքիմիական ասոցացիաների ուսումնասիրություններ, որի արդյունքում դուրս կբերվեն քիմիական տարրերի բնական միջավայրին բնորոշ երկրաքիմիական ասոցացիաները: Վերջինս կհանդիսանա անթրոպոգեն պայմաններում հողերում քիմիական տարրերի հարաբերակցությունների փոփոխության ուսումնասիրության էտալոնային ցուցանիշ:

Ռադիոէկոլոգիայի բաժին. Արմավիրի մարզի գյուղատնտեսական հողերում ռադիոնուկլիդների բաշխվածությունն փորձագիտական քարտեզների կազմում և ք. Երևանի բնակչության կողմից սննդամթերքում ռադիոնուկլիդների ակտիվություն և ռադիոնուկլիդների օրական ընդունման գնահատում:

Կենսաէներգիայի և կերային ռեսուրսների բաժին. Ստացված տվյալների բազան կհամադրվի Գեղամա լեռնաշղթայի վերաբերյալ համանման փորձնական նյութի հետ, որը հնարավորություն կտա բացահայտել արոտների արդյունավետության անկման որոշ պատճառներ բարելավման միջոցառումների համար: Արդյունքի հիմնական բաղադրիչներն են՝ բուսազանգվածի, բուսակազմի և հողերում N, P քանակական փոփոխությունները, իսկ կիրառման ոլորտը՝ անասնապահությունը:

ԱՏՀ և հեռազննման բաժին. լանդշաֆտների պլանավորմանն ուղղված գիտահեն որոշումների կայացման տեղեկատվական համակարգի ստեղծման նպատակով նախատեսվում է շարունակել լանդշաֆտների էկոլոգիական մոնիթորինգի հեռազննման համակարգի՝ արբանյակային լուսանկարների մշակման տվյալների կուբ միջավայրում մի շարք գործիքների ստեղծման աշխատանքները:

Մննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվավերլուծական կենտրոն. Շարունակական կիրառական հետազոտություններն ուղղված են սննդամթերքի անվտանգության գնահատմանը և ռիսկի վրա հիմնված որոշումների կայացման համակարգի ներդրմանը ՀՀ-ում: Նախատեսվում է Մննդամթերքում քիմիական վտանգների ռիսկի գնահատում և սննդակարգային ուսումնասիրություններ: Շարունակվող ծրագրով նախատեսված ծառայություններն ուղղված են պետական մոնիթորինգների օժանդակմանը:

5. Ակնկալվող արդյունքները, Նշված ուղղություններով իրականացվող հետազոտությունների ամփոփումներ, գիտական, գիտահանրամատչելի հրապարակումներ:

Կազմակերպության  
սնօրեն (ռեկտոր)



(ստորագրություն)

( Լ. Սահակյան )

(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

( Լ. Սահակյան )

(անուն ազգանուն)

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ**  
**«Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ»** ծրագրի  
(ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման						
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառնությունների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները (այդ թվում՝ Հավելված N 2-ի 5-րդ կետում նշված ակնկալվող արդյունքները)	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)	
1.	Շրջակա միջավայրի երկրաքիմիական հետազոտություններ ՀՀ տարբեր շրջաններում:	Հողերում քիմիական տարրերի ֆոնային երկրաքիմիական ասոցացիաների ուսումնասիրություն:	Հողերում տարրերի ֆոնային երկրաքիմիական ասոցիացիաներ, Էտալոնային ցուցանիշ	Տվյալների բազա, Քարտեզ, գրաֆիկ, վիճակագրություն, Հողվածներ Հաշվետվություն	I և II եռամսյակ	29188.1	
		Հրազդան գետի նմուշառում և տարրալուծման աշխատանքներ	Գետային համակարգի վիճակի գնահատում		III եռամսյակ		
		Արդյունքների ամփոփում, Հողվածների մշակում Հաշվետվությունների կազմում:	Հողվածների և հաշվետվության առկայություն		IV եռամսյակ		
2.	Ռադիոէկոլոգիայի բաժին	Արմավիրի մարզի գյուղատնտեսական նշանակության տարածքներում ռադիոէկոլոգիական հետազոտություններ	Հողային նմուշների գամմա սպեկտրաչափություն	Տարրալուծման արդյունքներ. բնական ու տեխնածին ռադիոնուկլիդների ակտիվություն	I եռամսյակ	15000.0	
			Բնակչության կլանված դոզաների և առողջական ռիսկի գնահատում, թվայնացում	Տվյալների էլեկտրոնային հենք	II-III եռամսյակ		
			Արդյունքների ամփոփում	Հաշվետվության և գիտական հոդվածի պատրաստում	IV եռամսյակ		
		ք. Երևանում սպառվող սննդամթերքում ռադիոնուկլիդների ակտիվության սննդակարգային հետազոտություններ	Սննդամթերքում և խմելու ջրում բնական ու տեխնածին ռադիոնուկլիդների նույնականացում և ակտիվության որոշում	ք. Երևանում սպառվող սննդամթերքում և խմելու ջրի տարրալուծման արդյունքներ	I-II եռամսյակ		
		Արդյունքների ամփոփում ռադիոնուկլիդների օրական ընդունման քանակների հաշվարկ, ռիսկի գնահատում	Գիտական հաշվետվության, հոդվածի պատրաստում	II- IV եռամսյակ			
3.	Կենսաէներգիայի և կերերի որակ	Չոր տափաստանային գոտու արոտների ուսումնասիրություն (Արագած լեռան օրինակով): Դաշտային հետազոտություններ կիրականացվեն թույլ արածեցված արոտներում, Կուսումնասիրվեն բուսականացվածի, բուսախմբերի և տերևների չոր կշիռը, հողերում ազոտի և ֆոսֆորի	Թեմայի հետ կապված գիտական հրապարակումների և վիճակագրական տեղեկատվության ուսումնասիրություն: Նախապատրաստական աշխատանքների իրականացում:	Գիտատեղեկատվական բազա՝ արոտների արածեցման թողած հետևանքների վերաբերյալ:	I եռամսյակ	12000.0	
			Արոտներում ընտրել փորձնական տեղամասեր և իրականացնել նմուշառման աշխատանքներ:				Ընտրված փորձատեղամասեր, բուսական և հողային նմուշների հավաքածու:
			Հավաքագրված բուսական և հողային նմուշներում				Արոտների վերաբերյալ դաշտային և լաբորատոր
					III եռամսյակ		

		քանակությունը: Ստացված արդյունքների համադրումը նախորդ տարվա նմանատիպ տվյալների հետ, թույլ կտա բացահայտել Արարատյան գոգահովտի արոտների ցածր արդյունավետության պատճառներն, ինչպես նաև լանջերի դիրքադրության ազդեցությունը:	որոշել նշված կենսաբանական և ագրոքիմիական ցուցանիշները:	հետազոտություններից ստացված արդյունքների համակարգչային բազա:		
			Ստեղծել ստացված փորձնական նյութի համակարգչային բազա՝ հաշվետվության և հողվածների տպագրության համար:	Անփոփիչ հաշվետվություն և հրապարակման համար փաստացի նյութերի հիման վրա տպագրված հոդված	IV եռամսյակ	
4.	USZ և հետազննման տեխնոլոգիաների բաժին	Լանդշաֆտային պլանավորման և լանդշաֆտային կայունության գնահատման գիտամեթոդական հիմունքների մշակում և Էկոլոգիական մոնիթորինգի հետազննման համակարգի ստեղծում:	Կլիմայի փոփոխության պայմաններում լանդշաֆտներում հողօգտագործման տարածաժամանակային փոփոխության քարտեզագրման, ինչպես նաև առանձին հողատեսքերի (land cover) Էկոլոգիական վիճակի գնահատման հետազննման մեթոդի մշակման աշխատանքների շարունակում՝ մեքենայական ուսուցման (Machine Learning: ML) ալգորիթմների կիրառմամբ:	Հեռազննմամբ (արբանյակային և աերոլուսանկարահանմամբ) հողատեսքերի քարտեզագրման և դրանց Էկոլոգիական վիճակի գնահատման ստուգաչափված ալգորիթմներ:	I, II, եռամսյակներ	18000.0
		Լանդշաֆտային բաղադրիչների (հող, ջուր, բույս) Էկոլոգիական վիճակի գնահատման հետազննման մեթոդների կատարելագործման աշխատանքների շարունակում՝ մեքենայական ուսուցման (Machine Learning: ML) ալգորիթմների կիրառմամբ:	Արբանյակային և աերոլուսանկարներից լանդշաֆտային առանձին բաղադրիչների (հող, ջուր, բույս) Էկոլոգիական վիճակի գնահատման ստուգաչափված հայտանիշներ և ալգորիթմների մշակում:	Տեղեկատվական բազաներ, գիտական հոդվածներ	III, IV եռամսյակներ	
5.	Սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական-վերլուծական կենտրոն	Կենդանական ծագում ունեցող մթերքի անվտանգության ոլորտում ռիսկի վրա հիմնված համակարգերի ներդրման գիտամեթոդական հենքի սպահովումը:	Անհրաժեշտ գրականության, նորմատիվների և օրենսդրական ակտերի հավաքագրում:	Սպանդանոցային ծագում ունեցող մթերքի անվտանգության ապահովման վերաբերյալ մեթոդական ուղեցույցի մշակում:	I, II եռամսյակ	21000.0
		Սննդամթերքում քիմիական վտանգների ռիսկի գնահատում:	Շարունակվելու են պարենամթերքի շուկայում լայն սպառում ունեցող մթերքներում քիմիական վտանգներով պայմանավորված ռիսկերի գնահատմանն ուղղված աշխատանքները:	Շուկաներում շրջայցերի իրականացում, մթերքների նմուշառում, ռիսկի գնահատում, ստացված տվյալների վերլուծություն և ամփոփում: Արդյունքների գիտական հիմնավորում:	III, IV եռամսյակներ	
6	Յունեսկո-ի «կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոն	«Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության շրջանակներում մագիստրոսական կրթության	Շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ մագիստրոսական թեզերում նորարարության ներմուծում, սեմինար	Դասընթացներ, տեղեկատվական փաթեթներ, վերապատրաստված թիրախային խմբեր, ՅՈՒՆԵՍԿՕ-ի «ԿԿԶ»	I եռամսյակ	4000.0

	աջակցություն,	վարժանքների կազմակերպում, թրեյնինգների իրականացում	ամբիոնի կողմից տրված վկայականներ:	
	UNESCO-ի բազային դպրոցներում կայուն զարգացման առանցքային թեմաներով էկոլոգիական կրթության իրականացում կիսամյակային դասընթաց-սեմինարների միջոցով	«Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի հետ համատեղ էկոլոգիական գիտակրթական ծրագրերի և միջոցառումների իրականացում, մասնակցություն, գիտական փորձերին	Սկայա հանդիպումներ, կիսամյակային դասընթաց-սեմինարներ, մրցույթներ, խաղեր, իրազեկված սովորողներ, պրեզենտացիաներ, ռեֆերատներ, տեսանյութեր, պաստառներ, ծառատունկ	II եռամսյակ
	Կրթություն հանուն կայուն զարգացման շրջանակներում գիտակրթական հետազոտությունների իրականացում	«Բաց կայուն դպրոցի» մոդելի փորձարկում UNESCO-ի բազային դպրոցներում, նոր նախագծերի մշակում և իրականացում	Հանրակրթության ոլորտի հետ ընդլայնված համագործակցություն, «Բաց կայուն» դպրոցի մոդելով գործող UNESCO-ի բազային դպրոցներ հաշվետվություն, համատեղ հոդվածներ, համատեղ ծրագրեր	III եռամսյակ
	Տեղական և միջազգային համագործակցություն, բնապահպանական գիտակրթական ծրագրերի բազաների պարբերաբար լրամշակում	Տեղական և միջազգային կազմակերպությունների հետ կապերի ընդլայնում, բնապահպանական կրթության ցանցի (ԲԿՑ) աշխատանքների ներգրավում, տեղեկատվության փոխանակում UNITWIN Networks, Copernicus Alliance, ENSI, Info CENN, GUPES, EENCE և այլ ցանցերում:	Համատեղ ծրագրեր, փոխայցելություններ, փորձի փոխանակում, հանդիպումներ, էկոլոգիական կրթության վերաբերյալ լրամշակված բազաներ, հաշվետվություն	IV եռամսյակ
<b>Ընդամենը</b>				<b>99188.1</b>

Կազմակերպության տնօրեն (ոեկտոր)



(ստորագրություն)

( Լ. Սահակյան )  
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար

(ստորագրություն)

( Լ. Սահակյան )  
(անուն ազգանուն)

Հավելված N 4  
 «25» 01 2021 թ.  
 N 4-18 պայմանագրի

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**  
 «Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ» ծրագրի  
 (ծրագրի անվանումը)

*հազար դրամ*

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդթվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	81162.84	16232.56	20290.71	20290.71	24348.85
2	տնտեսական և այլ ծախսեր*	18025.26	3605.05	4506.32	4506.32	5407.58
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>99188.1</b>	<b>19837.61</b>	<b>24797.03</b>	<b>24797.03</b>	<b>29756.43</b>

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝

  
 (ստորագրություն)

( Լ.Սահակյան )  
 (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

  
 (ստորագրություն)

( Տ.Տահակյան )  
 (անուն ազգանուն)



Կ.Տ.

\* Բուններում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը

Հավելված N 4.1  
 «25» 07 2021 թ.  
 N 6-78 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	4800.0
	Էլեկտրաէներգիայի ծառայություն	3000.0
	գազի ծառայություն	-
	Ջրամատակարարման ծառայություն	100.0
	Կապի ծառայություն	1640.0
	աղբահանություն	60.0
2	Գույք	560.0
3	Սարքեր և սարքավորումներ	560.0
4	Նյութեր	1250.0
5	Գործուղումներ	1000.0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	-
7	Արշավախմբեր	-
8	Հրատարակման ծախսեր	-
9	Մեքենայի գույքահարկ, տեխ. գնում, կայանում	386.0
10	Հակահրդեհային ծառայություն	180.0
11	Բենզին	900.0
12	Տեղեկատվական ծառայություն	350.0
13	Մասնագիտական վերապատրաստում	170.0
14	Համակարգչային ծառայություն	3894.0
15	Այլ	3975.26
Ընդամենը		18025.26

Կազմակերպության տնօրեն՝

  
 (ստորագրություն) ( Լ. Սահակյան )  
 (անուն ազգանուն)

Կազմակերպության  
 գլխավոր հաշվապահ՝

  
 (ստորագրություն)

( Տ. Տահակյան )  
 (անուն ազգանուն)



Կ.Տ.



**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
**« Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ»** ծրագրի  
(ծրագրի անվանումը)

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Ամսական աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1	Սահակյան Լիլիթ Վարուժանի	տնօրեն	աշխ.գիտ.թեկն.	220.0
2	Ասմարյան Շուշանիկ Գուրգենի	գիտ.գծով փոխտնօրեն	աշխ.գիտ.թեկն.	181.0
3		տնօրենի օգնական		150.0
4	Մաղաքյան Նաիրուհի Ռաֆիկի	գիտ.քարտուղար	կենս.գիտ.թեկն.	149.0
5	Գևորգյան Դիանա Անուշավանի	ընդհ.բաժնի վարիչ	-	133.0
6	Իսահակյան Տարուշ Վարդանի	գլխ.հաշվապահ	-	133.0
7	Մկրտչյան Մարինա Յուրիի	կադրերի ավագ տեսուչ	-	133.0
8	Բաբայան Գայանե Հրանտի	անալիտ աշխ.համակարգող	տեխ.գիտ.դոկ.	122.0
9	Մելքոնյան Գայանե Աշոտի	գիտ.արդյունքների լուսաբանման պատասխ.	-	100.0
10		գնումները համակարգող	-	85.0
11	Բելլերյան Անահիտ Նորայրի	ռեֆերենտ թարգմանիչ	-	103.0
12	Գալոյան Մարիաննա Սարգսի	համ. օպերատոր	-	63.0
13	Գալոյան Մարիաննա Սարգսի	գրադարանավար	-	47.7
14		քաղ.պաշտպ.շտաբի պետ	-	47.7
15	Տեփանոսյան Գևորգ Հովհաննեսի	բաժ.ղեկավար	կենս.գիտ.թեկն.	133.0
16		գիտական խորհրդատու	-	100.0
17	Հովհաննիսյան Հասմիկ Ալբերտի	առաջատար գիտ.աշխատող	կենս.գիտ.թեկն.	93.0
18	Սարգսյան Քրիստինա Վլաչեսլավի	ավագ գիտ.աշխատող	տեխ.գիտ.թեկն.	78.0
19	Գրիգորյան Եվա Գերմանի	ավագ գիտ.աշխատող	քիմ.գիտ.թեկն.	53.0
20		ավագ գիտ.աշխատող	-	106.0
21	Մաղաքյան Նաիրուհի Ռաֆիկի	գիտ.աշխատող	կենս.գիտ.թեկն.	52.0
22	Հարությունյան Նորիկ Մարտիկի	կրտսեր գիտ.աշխատող	-	96.62
23		կրտսեր գիտ.աշխատող		96.62
24	Գևորգյան Աստղիկ Տիգրանի	ավ. լաբորանտ-հետազոտող		95.0
25	Դավթյան Վարսենիկ Սեյրանի	լաբորանտ-հետազոտող	-	93.3
26		լաբորանտ-հետազոտող		93.3
27		լաբորանտ-հետազոտող		93.3
28	Մելիքյան Լևոն Անդրիասի	քիմ.անալիտիկ	դեղ.գիտ.թեկն.	96.62
29	Հայրապետյան Էլիզա Հմայակի	քիմ.անալիտիկ	-	96.62
30	Աֆրիկյան Գրետա Գուրգենի	ավագ լաբորանտ	-	89.61
31	Ասմարյան Շուշանիկ Գուրգենի	բաժնի ղեկավար	աշխ.գիտ.թեկն.	133.0
32	Մուրադյան Վահագն Մոսի	ավագ գիտ.աշխատող	աշխ.գիտ.թեկն.	93.3
33	Տեփանոսյան Գարեգին Հովհաննեսի	գիտ.աշխատող	կենս.գիտ.թեկն.	104.0
34	Հովսեփյան Ազատուհի Արծրունու	կրտսեր գիտ.աշխատող	-	96.62
35	Այվազյան Գրիգոր Միլերի	լաբորանտ-հետազոտող	-	93.3
36	Խլղաթյան Անահիտ Նշանի	լաբորանտ-հետազոտող	-	93.3
37	Ավետիսյան Ռիմա Արմենի	լաբորանտ-հետազոտող	-	47.7
38	Մեծունց Բազրատ Խաչատուրի	բաժ. ղեկ.	գյուղ.գիտ.դոկ.	133.0
39	Նավասարդյան Մարինե Արագու	ավագ գիտ.աշխատող	կենս.գիտ.թեկն.	106.0

40	Սարգսյան Տաթևիկ Աշոտի	կրտսեր գիտ.աշխատող	-	96.62
41	Բեյլանա Օլգա Ալեքսանդրի	բաժ.ղեկ.	կենս.գիտ.թեկն.	133.0
42	Փյունկյուլյան Կոնստանտին Իվանի	ավագ գիտ.աշխատող	ֆիզ.-մաթ.գիտ.թեկն.	100.0
43	Մովսիսյան Նոնա Էդիկի	լաբորանտ-հետազոտող	-	93.3
44	Դեմիրճյան Գարրի Արթուրի	լաբորանտ-հետազոտող	-	93.3
45	Պիպոյան Դավիթ Աշոտի	կենտրոնի ղեկավար	սննդագիտ.դոկ. (Բտալիա)	150.0
46	Բեզյարյան Մելինե Ռադիկի	խմբի ղեկավար	տեխ.գիտ.թեկն.	114.0
47	Ստեփանյան Մեդա Արթուրի	լաբորանտ-հետազոտող	-	93.3
48		լաբորանտ-հետազոտող	-	93.3
50	Յարմալոյան Քրիստինե Վարդանի	լաբորանտ-հետազոտող	-	47.7
51	Միրեյան Լիանա Արայիկի	փորձագետ-հետազոտող	-	93.3
52	Հովհաննիսյան Աստղիկ Սերգեյի	փորձագետ-հետազոտող	-	93.3
53	Աբրահամյան Արմեն Սարգսի	փորձագետ	-	93.3
54	Պողոսյան Էլեն Վաղինակի	փորձագետ	-	47.7
55	Ղարիբյան Գոհար Քրիստափորի	փորձագետ	-	47.7
56	Սաթունց Լաուրա Վահիկի	փորձագետ	-	47.7
57		փորձագետ	-	47.7
58	Ասատրյան Անի Զոհրաբի	քիմ.անալիտիկ	-	93.3
59	Շախնազարովա Յանա Գերասիմի	լաբորանտ	-	93.3
60	Պողոսյան Գայանե Սուրենի	ամբիոնի վարիչ	կենս.գիտ.թեկն.	114.0
61	Գրիգորյան Մերի Մուրադի	մեթոդիստ	-	47.7
62		մեթոդիստ	-	47.7
63	Ամիրյան Ելենա Վարուսի	մեթոդիստ	-	93.3
64	Ենգիբարյան Գեղամ Լևոնի	տնտեսվար	-	140.0
65	Աղաբաբյան Տիգրան Վոլոդյայի	ինժեներ էլեկտրիկ	-	73.0
66	Մարդանյան Գայանե Հովհաննեսի	հավաքարար	-	89.61
67	Մարտիրոսյան Ռոզա Հովհաննեսի	հավաքարար	-	93.3
68	Սահակյան Գևորգ Գուրգենի	վարորդ	-	89.61
69	Բաղայան Արթուր Խաչիկի	վարորդ	-	93.3
70	Երանոսյան Արեգնազ Պարույրի	դռնապահ	-	89.61
71	Բելիխ Վալենտինա Ալեքսանդրի	դռնապահ	-	89.61
<b>Ընդամենը</b>				<b>6 763.57</b>

Վազմակերպության  
տնօրեն (ռեկտոր)՝

  
(ստորագրություն)

( Լիլիթ Մանակյան )  
(անուն ազգանուն)

Վազմակերպության  
անձնակազմի կառավարման  
բաժնի պետ՝

  
(ստորագրություն)

( Մարինա Մկրտչյան )  
(անուն ազգանուն)

Կ.Տ.